

Биолог. журн. Армении, 3-4 (57), 2005

УДК 592/599

ԾԱԾԱՆԱՅԻՆ ԶԿՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՃՇԳՐՏՈՒՄԸ

Հ.Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտ, 375014, Երևան

Ցույց է տրված ծածանային ձկների հայերեն անվանումների միօրինակության բացակայությունը և խառնաշփոթ վիճակը: Առաջարկված է *густера* և *карась* ձկների հայերեն նոր անվանումներ: Հոդվածը ամփոփված է ծածանային ձկների հայերեն առկա թարգմանությունների և հեղինակի կողմից առաջարկվող ճշգրտված և նոր անվանումների ցուցակով:

Показано отсутствие единообразия в переводах и путаница в армянских наименованиях карпообразных рыб, таких как сазан, карп, карась, плотва, быстрянка и т.д. Предложены новые армянские наименования рыб - густера и карась. Статья обобщена перечнем имеющихся армянских переводов наименований карпообразных рыб и предложенных автором уточненных и новых наименований.

The article considers the problem of the disorderliness in the sphere of Armenian translation version of *Cypriniformes* fish. Here some new Armenian denominations of *Carassius carassius* and *Blicca bjoerkna* are suggested. The list of the present Armenian translation versions of the *Cypriniformes* fish in parallel with their exact and new denominations suggested by the author is given.

Ծածանային ձկներ - թարգմանություն

Կենդանիների հայերեն անվանումների խառնաշփոթության, անճշտության մասին արդեն ասվել է նախորդ հոդվածներում [5, 6, 18]: Այս հարցի վերլուծության շարունակությունը տրվում է ներկայացվող հոդվածում:

Մեծ դժվարությունների առաջ ենք կանգնում, երբ փորձում ենք պարզել որևէ կենդանու հայերեն անվանումը: Ինչպես բառարաններում, այնպես էլ մասնագիտական գրականության մեջ տիրող խառնաշփոթության հետևանքով դժվար է կողմնորոշվել, թե տվյալ կենդանու հայերեն ո՞ր անվանումն է ճիշտ: Այս իրավիճակը կենդանիների անվանումների կամայական թարգմանության արդյունք է: Դա վերաբերում է նաև ծածանային ձկներին:

Հայաստանի ձկնաբանների կողմից բավական լավ է ուսումնասիրված ձկնաշխարհը, ձկների ձևաբանությունը, կենսաբանությունը, կարգաբանությունը և այլն: Սակայն միջև այժմ քիչ ուշադրություն է դարձվել ձկների հայերեն անվանումների ճշտությանը: Մասնավորապես, ծածանային ձկների հայերեն անվանումների մեջ քառասյին վիճակ է տիրում: Այսպես, ռուսերեն *сазан* կոչվող ձուկը հայերեն թարգմանված է որպես *սազան* [14], *գետածածան* [10, 12], *ծածան* [7]: Որոշ թարգմանությունների համաձայն [13], *сазан* -ին կարելի է անվանել և *ծածան*, և *գետածածան*: Նույն հեղինակը [13] *кару* կոչվող ձկանն էլ է անվանում

ծածան, գետածածան: Մյուս կողմից, ըստ Համբարյանի [9] գետածածանը *плотва* ձուկն է: Իսկ երբ փորձում ենք գրականության այլ աղբյուրներից իմանալ *плотва* ձկան հայերեն անվանումը, ապա պարզվում է, որ այն թարգմանվում է որպես *մանրածածան* [14], *կարմրակն* [2, 7, 10, 12], կամ և՛ *մանրածածան*, և՛ *կարմրակն* [3, 13]:

Ըստ Համբարյանի [9] *կարծիքի* մանրածածան է կոչվում ձկների մեկ այլ տեսակը՝ *карась* ձուկը, իսկ Ղազարյանի [12] *կարծիքով* մանրածածան *верховка* ձուկն է: Այսպիսով, *плотва*-ն ունի հետևյալ հայերեն թարգմանությունները՝ գետածածան [9], *կարմրակն* [2, 7, 10, 11, 12], *մանրածածան* [14]: Մյուս կողմից մանրածածան են անվանում *верховка* [12] և *карась* [9] ձկներին: Ստացվում է, որ *плотва*, *верховка* և *карась* ձկները միևնույն տեսակն են մանրածածան: Այս երեք ձկները թեպետև մտնում են նույն ընտանիքի մեջ (ծածանայինների ընտ., *Cyprinidae*), այնուամենայնիվ սրանք պատկանում են տարբեր ցեղերի, համապատասխանորեն *Rutilus*, *Leucaspis* և *Carassius*, իսկ *карась* ձուկը նույնիսկ մոտցված է առանձին ենթաընտանիքի մեջ (*Cyprininae*):

Մեծ տարակարծիքի ենք հանդիպում նաև *карась* անվանումը հայերեն թարգմանելիս: Այսպես, մի շարք հեղինակների *կարծիքով* [4, 11, 12, 13] այս ձկան հայերեն անվանումը *ծածան* է, ըստ Համբարյանի [9]՝ *մանրածածան*, իսկ ըստ Ջիվանյան և Լուրիշև. [15]՝ *լճածածան*: Մյուս կողմից, ինչպես արդեն նշեցինք *сазан* ձուկն է թարգմանված *ծածան* [2, 7, 9]: Հայոց լեզվի հոմանիշների բառարանում [16] որպես հոմանիշներ են տրված *ծածան*, *գետածածան*, *լճածածան* անվանումները:

Ի մի բերելով նշված գրական տվյալները, ստացվում է, որ *карась*, *сазан*, *карп* ձկները հայերեն կոչվում են միանման՝ *ծածան*: Այդպիսի մոտեցում է դիտվում Ղարիբյանի [13] բառարանում:

Եթե *карась* և *сазан* ձկներին, որոնք տարբեր տեսակներ են (*Carassius carassius*, *Cyprinus carpio*), ծածան անվանենք, ապա այդ դեպքում ինչպե՞ս պետք է անվանել *карп*-ին, որի անունից է բխում *կարգի* անվանումը *отряд карпообразные*, հայերեն *կարգ* ծածանակերպեր: Ուստի, ճիշտ կլինի եթե միայն *карп* ձուկը հայերեն կոչվի *ծածան*, իսկ *сазан*-ին անվանենք *գետածածան* կամ *սազան*:

Կրկին անրադառնալով *карась* ձկանը, նշենք որ նա ունի նույնիսկ այսպիսի թարգմանություն՝ *ծովային ծածան* [14], որն անթույլատրելի է, քանի որ *карась* *обыкновенный* (*Carassius carassius*) և *карась* *морской* (*Diplodus annularis*) տարբեր տեսակներ են և պատկանում են տարբեր կարգերի, առաջինը՝ *ծածանակերպերին* (*Cypriniformes*), երկրորդը՝ *պերկեսակերպերին* (*Perciformes*):

Համաձայն հայերեն արմատական բառարանի [1], ռուսերեն *карась*, ինչպես նաև մորդվիներեն *karas̆ya* նշանակում է «կարաս»: Հիմք ընդունելով նաև այն, որ այս ձկան անվանումը և լատիներեն, և ռուսերեն ունի միևնույն արտասանությունը, իսկ ժողովուրդը նրան *կարաս* է անվանում, և, մանավանդ, որ արտաքինով նման է լայնափոր ամանի՝ կարասի, առաջարկում են *карась* ձուկը հայերեն անվանել *կարասածուկ* (կարասի հետ չփոթելու համար):

Նման խառնաշփոթ իրավիճակ է տիրում նաև *ծածանային* ձկների այլ տեսակների հայերեն անվանումների մեջ: Այսպես, *густера* ձուկը (*Blicca bjoerkna*) հայերեն նույնպես անվանում են *գուստերա* [7, 9, 10]: Մինչդեռ գրականության

մեջ նշվում է, որ *густера* ծուկը իր անունը ստացել է «густо» բառից, քանի որ ինչպես աշնանը, այնպես էլ զարնանը նա կազմում է հսկայական վտառներ [20]: Այս ձկան ընդունակությունը խիտ վտառներ առաջացնելու հիմք է հանդիսացել նրան այդպես անվանելուն [21]:

Հայտնի ձկնաբան Դադիկյանը [7] այսպես է նկարագրում այս ձկան վարքը. «... Այդ տեղերում նա ապրում է վտառներով, որոնք կազմված են լինում մի քանի հարյուր ձկնիկներից... Վտանգի դեպքում ցրվում են, այնուհետև նորից կուտակվում են նույն տեղում: Փախուստի դեպքում վտառի բոլոր առանձնյակները լողում են միևնույն արագությամբ և միևնույն ուղղությամբ: Փոքրաթիվ վտառներում ձկները լողում են մեկը մյուսի հետևից քարավանի նման: Ի տարբերություն մյուս տեսակների այս ձկները վտառներ են կազմում նաև ձվադրման համար...»: Սակայն, չնայած այսպիսի նկարագրությանը, գրքի հեղինակը այս ձկանը նույնպես գուտերա է անվանում: Ըստ երևույթին, դա կարելի է բացատրել նրանով, որ հեղինակը իր առջև ձկների հայերեն անվանումների շտկման խնդիր չի դրել:

Հանդիպում է նաև *густера* ձկան այսպիսի թարգմանություն *արծաթքրամ* [12]: Ծիշտ է, այս ձկան մարմինը արծաթագույն է, և արտաքինով նա հիշեցնում է բրամի [21], սակայն այդ թարգմանությունը չի կարելի ճիշտ համարել, քանի որ կա ձկան տեսակ *серебряный леши - Pterycombus brama* (леши ծուկը հայերեն թարգմանվում է բրամ), որը պատկանում է պերկեսակերպերի կարգի ծովային բրամների ընտանիքին:

Որոշ հեղինակների մոտ [2] *густера*-ն թարգմանված է որպես *գոճի*: Իր հերթին *сазан* ծուկն է թարգմանված *գոճի* [12]: Սա նույնպես ճիշտ համարել չի կարելի: Ըստ երևույթին, *գոճի* անվանումը պետք է ընդունվի միայն որպես ժողովրդական:

Այսպիսով, ելնելով վերը շարադրածից՝ առաջարկում ենք *густера* ծուկը հայերեն անվանել *վտառածուկ*, որը, ինչպես և ռուսերենում, բնութագրում է նրա ապրելակերպը, վարքը:

Կանգ առնենք ևս մեկ ծածանային ձկան *быстрянка*-ի *Alburnoides bipunctatus* հայերեն թարգմանության վրա: Բազմաթիվ գրական աղբյուրներում, այդ թվում նաև ձկնաբանների աշխատություններում [2, 7, 9, 10, 12], այս ծուկը թարգմանված է *տառեխիկ*: Արդյո՞ք կարելի է ճիշտ համարել այս թարգմանությունը: 2^o է որ տառեխները (*сельди*) պատկանում են տառեխակերպերի կարգին *Clupeiformes* [9, 14, 15] և կապ չունեն ծածանակերպերի կարգի հետ: Դպրոցական դասագրքում [15] տառեխիկ է անվանված չարոտը:

Գրականության մեջ [2] կա *быстрянка* ձկան նաև այսպիսի անվանում *ճապալ*: Սա, իհարկե, գրական անուն չէ: Ժողովուրդն է այդպես անվանում այս փոքրիկ, արագաշարժ ձկանը: Կան նաև ժողովրդական այլ անվանումներ *փիչխուլ* (փոքր չափերի պատճառով), *գմբուռն*: Արագաշարժության պատճառով նրան ռուսերեն *быстрянка* են ասում: Այդ իմաստն է արտահայտում նաև «ճապալ» բառը, որը հավանաբար իր ծագումը ստացել է «ճապուկ» բառից [2], ինչը նշանակում է արագ, շուտ. այստեղից էլ հայերեն ճեպ, հապճեպ բառերը [1]: Այսպիսով, ճապալ անվանումը շատ բնորոշ է այս ձկան համար, և ճիշտ կլինի այդպես անվանել սրան և զերծ մնալ տառեխիկ անունից:

Վերլուծենք նաև *усач-чанари Barbus capito* ձկան հայերեն թարգմանությունները: Այս ծուկը հայերեն պետք է կոչվի *ճանար* [7, 9]: Մինչդեռ

թե՛ ժողովուրդը, և թե՛ որոշ գրականության մեջ ճանարը շփոթում են *մուրծա* *Barbus mursa* տեսակի հետ: Բառարանները ավելի են խորացնում այդ շփոթությունը: Այսպես, հայոց լեզվի հոմանիշների բառարաններում [16, 17] տրված է, որ ճանար ծուկն ունի հետևյալ անվանումները՝ մուրծա, մուրծի, մուրզա, մուրզի, նույնիսկ գետածածան [17]: Մուրզա և գետային ծածան անվանումները նշվում են նաև «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» [8]: Ըստ հայ-ռուսերեն բառարանի [11] ճանարը սովորական բեղաձուկն է *Barbus barbus*:

Ամփոփելով այս վերլուծությունը կարելի է անել հետևյալ ճշգրտումը, որ *մուրծա* *Barbus mursa* տեսակը ռուսերեն *мурца* ծուկն է, իսկ *ճանարը* *Barbus capito* *укач-чанапи* կամ *укач буйатман*: Վերջին անվանումը պայմանավորված է նրանով, որ այս ձկան մեջքը և կողքերը մինչև կողագիծը մուգ պողպատագույն են, իսկ կողագծից ցած և փորը դեղին է: Պողպատյա գույնն այնքան բնորոշ է ճանարին և գույների սահմանն այնքան արտահայտված, որ իրանում ճանարին անվանում են *պողպատյա ծուկ*՝ *փուլաթ մաի* [7, 19]:

Անհասկանալի են գրականության մեջ հանդիպող ձկների որոշ ընտանիքների լատիներեն անվանումները: Այսպես, ծածանայինների ընտանիքը (*Cyprinidae*) անվանել են *Cobitidae*, այն դեպքում, երբ այդպես է կոչվում ոլորածկնայինների ընտանիքը, իսկ օձածկնայինների ընտանիքը (*Anguillidae*) անվանել են *Cyprinidae* [10]:

Այսպիսով, վերլուծելով ծածանային ձկների հայերեն անվանումների խառնաշփոթ վիճակը, ինչպես նաև հաշվի առնելով այդ ձկների ապրելակերպը, կենսաբանական և ձևաբանական առանձնահատկությունները (չափը, ձևը), ստուգաբանելով նրանց լատիներեն և ռուսերեն անվանումները առաջարկվում է այսուհետև մասնագիտական գրականության մեջ, բառարաններում, բուհական և դպրոցական դասագրքերում և այլուր օգտագործել ծածանակերպերի կարգին պատկանող ձկների հետևյալ հայերեն անվանումները.

ձկան ռուսերեն անվանումը	գործածվում կամ հանդիպում է գրականության մեջ	առաջարկվող հայերեն անվանումներ
сазан	ծածան, գետածածան, սազան, հայելային ծածան, գոճի	գետածածան, սազան
кап	ծածան	ծածան
карась	ծածան, մանրածածան, լճածածան, ծովային ծածան	կարասածուկ
плотва	մանրածածան, գետածածան, կարմրակն	մանրածածան, կարմրակն
густера	գուստերա, գոճի	վտառածուկ
быстрянка	տառեխիկ, ճապալ	ճապալ
укач-чанапи	ճանար, մուրծա, մուրծի, մուրզա, մուրզի, գետածածան, բեղլու	ճանար
мурца	ճանար, մուրծա, մուրծի	մուրծա

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Աճառյան* Հ. Հայերեն արմատական բառարան: Բ հատոր, Ե-Ց, Եր.: Երևանի համալսարանի հրատ., 687 էջ, 1973:
2. *Անանյան* Վ. Հայաստանի կենդանական աշխարհը: Երևան: Հայաստան, 451 էջ, 1975:
3. *Ասլանյան* Ա.Ա. Հայաստանի կենդանական աշխարհը: «Հայկական ՍՍՀ ֆիզիկական

- աշխարհագրություն» գրքում: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 258-269, 1971:
4. *Բեղիդյան Պ.Ս., Անմեղիկյան Դ.Ե. Ղարիբյան Զ.Ա.* Ռուս-հայերեն, հայ-ռուսերեն բառարան: Երևան, : Հայաստան, 639 էջ, 1987:
5. *Գրիգորյան Յ.Զ.* Հայաստանի կենսաբ. հանդես, 1-2, 55, 173-176, 2003:
6. *Գրիգորյան Յ.Զ.* ՀԳԱԱ Ձեկույցներ, 105, 2, 178-182, 2005:
7. *Ղադիկյան Ս.Գ.* Հայաստանի ձկները: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ, 212 էջ, 1971:
8. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հ III Կ-Մ, Կազմ. Ա.Ա. Սուքիասյան, Ե.Գ. Տեր-Սիմոնյան և ուրիշներ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ, 574 էջ, 1974:
9. *Համբարյան Մ.Ե.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Ի. 3, Երևան, 207 էջ, 1999:
10. Հայաստանի կենսաբազմաձևությունը: Առաջին ազգային զեկույց: Երևան, 158 էջ, 1999:
11. Հայ-ռուսերեն բառարան: Գլխ. խմբ. Ե.Յ. Գալստյան: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 724 էջ, 1987:
12. *Ղազարյան Ռ.Ս.* Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան: Գիրք Դ, Ձկներ: Երևան: Մակմիլան Արմանիա հրատ., 451 էջ, 2000:
13. *Ղարիբյան Ա.Ս.* Ռուս-հայերեն բառարան, Երևան: Հայաստան, 1434 էջ, 1982:
14. *Նաումով Ս.Պ.* Ողնաշարավորների կենդանաբանություն: Երևան: Հայպետուսմանկ-հրատ, 505 էջ, 1956:
15. *Ջիվանյան Կ.Ա., Ղանիբեյան Ֆ.Դ., Ռուխկյան Ռ.Դ., Յավրույան Է.Գ.* Կենսաբանություն: Կենդանիներ, (դասագիրք հանրակրթ. դպ. 7-րդ դաս. համար): Երևան: Մակմիլան-Արմանիա հրատ., 158 էջ, 2000:
16. *Սուքիասյան Ս.Ս.* Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 683 էջ, 1967:
17. *Սուքիասյան Ս.Ս.* Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան: Եր.: Երևանի համալսարանի հրատարակչություն, 1237 էջ, 2003:
18. *Григорян А.Дж.* Вестник МАНЭБ, 9, 8, 210-212, 2004.
19. *Дадикян М.Г.* Рыбы Армении. Ереван. Изд. АН Арм ССР, 245 стр., 1986.
20. Жизнь животных. Т 4. Ред. Т. С. Расс, М., Просвещение, 575 стр., 1983.
21. Рыбы. Попул. энцикл. справочник. Ред П.И. Жуков. Минск, : Белорус. Сов. Энциклопедия, 311 стр., 1989.

Поступила 05.IX.2005